DOI: 10.54503/978-9939-9312-5-8-298

ԶԲԱՂՎԱԾՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԻՏՈՒՄՆԵՐԸ ԵՎ ԴԻՆԱՄԻԿԱՅԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ ՀՀ-ՈՒՄ

ՆԵՐՍԵՍ ՆԵՐՍԻՍՅԱՆ

Ներածություն: Գլոբալ տնտեսական փոփոխությունները, տեխնոլոգիական առաջընթացը, ժողովրդագրական փոփոխություններն ու միգրացիոն գործընթացները էականորեն ազդում են աշխատաշուկայի կառուցվածքի և զբաղվածության դինամիկայի վրա: Հատկապես վերջին տարիներին՝ համավարակի, պատերազմական իրադարձությունների և հետպատերազմյան վերականգնման համատեքստում, ՀՀ-ում զբաղվածության կառուցվածքն ու միտումները ենթարկվել են զգալի փոփոխությունների, ինչն անհրաժեշտ է դարձնում դրանց համակողմանի ուսումնասիրությունն ու վերլուծությունը: Այսպիսի ուսումնասիրությունը թույլ կտա բացահայտել ոչ միայն առկա խնդիրները, այլև գտնել զարգացման նոր ուղղություններ: Հոդվածի ուսումնասիրության նպատակն է վերլուծել զբաղվածության զարգացման հիմնական միտումները և դինամիկան ՀՀ-ում վերջին տարիների ընթացքում՝ հիմք ստեղծելով զբաղվածության ոլորտում առավել արդյունավետ քաղաքականության մշակման և իրագործման համար, այդ թվում զբաղվածության կառուցվածքային փոփոխությունների, գործազրկության մակարդակի փոփոխությունների, ոլորտային և տարածքային տարբերությունների բացահայտելու միջոցով: Թեմայի ուսումնասիրության շրջանակում առաջադրված հիմնական խնդիրները ներառում են մի քանի կարևոր ուղղություններ, որոնք համատեղորեն հնարավորություն կտան համակողմանիորեն վերլուծել ՀՀ-ում զբաղվածության զարգացման միտումները:

Գրականության ակնարկ: Ա. Մ. Նանավյանը իր հոդվածում վերլուծում է զբաղվածության կառուցվածքի դինամիկան և զարգացման միտումները աշխարհի 30 երկրների համեմատական օրինակով՝ երեք հիմնական տնտեսական ոլորտներում՝ գյուղատնտեսություն, արդյունաբերություն և ծառայություններ:[1] Հեղինակը նպատակ է ունեցել բացահայտել, թե ինչպես է փոխվել զբաղվածության բաշխումը ոլորտների միջև, ինչպես են կառուցվածքային փոփոխությունները ազդել համախառն ներքին արդյունքի (ՀՆԱ) արտադրության վրա, և ինչ ազդեցություն են դրանք ունեցել մեկ աշխատողի արտադրողականության ցուցանիշի վրա:

Ե. Դ. Կատուլսկու, Դ. Գ. Շչիպանովայի, Ե. Ա. Գուրինայի և Գ. Է. Արբաևի համահեղինակությամբ հրապարակված հոդվածում, որը տպագրվել է «Պետություն և քաղաքացիական հասարակություն. քաղաքականություն,

[1] Nanavyan, A. M. (2012). Структура занятости населения: динамика и тенденции развития. Национальные интересы: приоритеты и безопасность, (7), 38.

տնտեսություն, իրավունք» հանդեսում, վերլուծվում են ժամանակակից ռուսական աշխատաշուկայի ձևավորման վրա ազդող հիմնական գործոնները:[2] Հեղինակներն ուսումնասիրել են աշխատուժի թվաքանակի և բնակչության եկամուտների դինամիկան, ընդգծելով սոցիալական անհավասարության աճի խնդիրը և աշխատուժի թվաքանակի նվազման պատճառները: Հատուկ ուշադրություն է դարձվել տեղեկատվական տեխնոլոգիաների ազդեցությանը սոցիալ-աշխատանքային հարաբերությունների վրա՝ ներառյալ թվայնացման գործընթացի երկարաժամկետ ազդեցությունները զբաղվածության ապագայի վրա: Հոդվածում վերլուծվել են նաև վերջին տարիներին զբաղվածության կառուցվածքում տեղի ունեցած փոփոխությունները՝ ներառյալ ոչ ֆորմալ զբաղվածությունը, ոչ ստանդարտ զբաղվածության ձևերը և աշխատանքային շուկայում խոցելի խմբերի վիճակը: Ուսումնասիրության արդյունքները կարևոր են նաև ՀՀ աշխատաշուկայի զարգացման համատեքստում՝ հաշվի առնելով թվայնացման, միգրացիայի, եկամտային անհավասարության և զբաղվածության ձևերի փոփոխման ընդհանրական միտումները:

ՀՀ-ում զբաղվածության հիմնախնդիրների և դրանց կարգավորման առանձնահատկությունների վերաբերյալ արժեքավոր վերլուծություն է ներկայացրել Ռ. Մանգասարյանը, ով, մասնավորապես անդրադարձել է ԼՂՀ զբաղվածության քաղաքականության նպատակներին, խնդիրներին և կառուցվածքային առանձնահատկություններին:[3] Հեղինակը ընդգծում է, որ զբաղվածության կարգավորման հիմնական նպատակը բնակչության լրիվ և արդյունավետ զբաղվածության ապահովումն է, ինչի համար անհրաժեշտ է բարելավել գործազուրկների և հաշմանդամ անձանց մրցունակությունը, խթանել երիտասարդների և կանանց ներգրավվածությունը աշխատաշուկայում, ինչպես նաև ապահովել աշխատանքային ռեսուրսների տեղաշարժի արդյունավետ կառավարում:

Զբաղվածության հիմնախնդիրների համատեքստում տարբեր հեղինակներ նաև ուշադրություն են դարձրել հատկապես դատապարտյալների աշխատանքի իրավունքին և վերասոցիալականացմանը, ինչին անդրադարձել են Բայդովան, Գրիշինան և Քոչինյանը՝ ընդգծելով, որ այս խումբը հաճախ դուրս է մնում զբաղվածության պետական ծրագրերից, չնայած օրենսդրական հնարավորություններին: Ուստի ՀՀ-ում զբաղվածության դինամիկայի վերլուծության մեջ անհրաժեշտ է ընդգրկել ոչ միայն ընդհանուր աշխատաշուկայի միտումները, այլև շեշտադրել խոցելի և հատուկ կարգավիճակ ունեցող խմբերի (գործազուրկներ, հաշմանդամներ, դատապարտյալներ,

---

[2] Катульский, Е. Д., Щипанова, Д. Г., Гурина, Е. А., & Арбаев, Г. Э. (2023). Современные тенденции развития российского рынка труда. *Знание. Понимание. Умение*, (1), https://doi.org/10.17805/zpu.2023.1.14

[3] Ռուզաննա Մանգասարյան, Զբաղվածության կարգավորման հիմնախնդիրները ԼՂ-ում, էջ 217 տնտեսագիտության տեսության & կառավարման ամբիոնի դոցենտ՝ https://arar.sci.am/Content/257723/file_0.pdf

երիտասարդներ, կանայք) ինտեգրման քաղաքականության արդյունավետությունը[4]:

Լ.Լ. Հակոբյանը զբաղվածության հիմնախնդիրների համատեքստում հատուկ ուշադրություն է դարձնում գյուղատնտեսության ոլորտում աշխատաշուկայի անկանոն վիճակին՝ ընդգծելով ոլորտի կազմակերպչական թերություններն ու սեզոնայնությամբ պայմանավորված զբաղվածության փոփոխականությունը:[5] ՀՀ-ում զբաղվածության և գործազրկության հարցերը խորությամբ ուսումնասիրվել են տնտեսագետների և սոցիոլոգների՝ Վ. Խոջաբեկյանի, [6] Ա. Սարգսյանի[7] և Ա. Թադևոսյանի[8] աշխատություններում: Նրանք վերլուծել են ինչպես կառուցվածքային գործազրկության պատճառները, այնպես էլ աշխատաշուկայի տարիքային և տարածքային անհամաչափությունները: Հատկանշական է նաև ՀՊՏՀ «Ամբերդ» հետազոտական կենտրոնի կատարած աշխատանքը, որը վերաբերում է ՀՀ աշխատաշուկայի վերլուծությանը և զբաղվածության պետական կարգավորման ծրագրերին:[9] Այդ ուսումնասիրություններում հատկապես կարևորվել են COVID-19 համավարակի և 2020 թվականի Արցախյան պատերազմի հետևանքով առաջացած նոր մարտահրավերները, որոնք լրջորեն փոխել են զբաղվածության դինամիկան և պահանջում են արդի ու ճկուն լուծումներ: Մասնավորապես, առաջարկվել են պետական աջակցության նոր ծրագրային մոդելներ՝ նպատակաուղղված զբաղվածության վերականգնմանն ու խոցելի խմբերի ինտեգրմանը աշխատաշուկայում[10]: Ա. Խաչատրյանն իր վերլուծության մեջ ընդգծում է, որ ՀՀ տնտեսական զարգացման և աղքատության հաղթահարման

---

[4] Բայդովա Ն.Վ., Գրիշինա Օ.Յու., Քոչինյան Գ.Է., «Ռուսաստանի և Հայաստանի ուղղիչ հաստատություններում դատապարտյալների աշխատանքային գործունեության իրավական կարգավորումը», 2019, էջ 7

[5] Հակոբյան, Լ.Լ. (2013). Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության մեջ աշխատաշուկայի ձևավորում և աշխատանքային ռեսուրսների օգտագործման արդյունավետության բարձրացում, Երևան 2013թ.

[6] Խոջաբեկյան, Վ. (2001). Զբաղվածության հիմնախնդիրները Հայաստանում անցումային շրջանի ընթացքում. Երևան: Գիտություն, էջ239 էջ:

[7] Սարգսյան, Ա. (2001). Աշխատաշուկան Հայաստանի Հանրապետությունում. Երևան: անհրատարակ, 222 էջ:

[8] Թադևոսյան, Ա. (2001). Զբաղվածության հիմնախնդիրներն ու աղքատության հաղթահարման ռազմավարությունները Հայաստանում. Երևան: Հայկական ռազմավարական և ազգային հետազոտությունների կենտրոն, , Երևան, 2001: 56 էջ:

[9] Թադևոսյան, Զ., Հայրապետյան, Ա., Ավետիսյան, Թ., Սարգսյան, Ա., Մկրտչյան, Տ., Մաթևոսյան, Դ., և Դավթյան, Կ. (2021). ՀՀ աշխատաշուկայի վերլուծության և զբաղվածության պետական կարգավորման ծրագրային լուծումներ. Երևան: Ամբերդ, էջ 7

[10] Թադևոսյան, Զ., Ավետիսյան, Թ., Մկրտչյան, Տ., Մաթևոսյան, Դ., և Դավթյան, Կ. (2022). Բնակչության զբաղվածության ապահովման հիմնախնդիրներն ու պետական կարգավորումը Հայաստանի Հանրապետությունում. Երևան: Ամբերդ. Վերցված է https://asue.am/upload/files/amberd/Amb%2052.pdf, էջ 5

հիմնապայունը զբաղվածության մակարդակի կայուն և շարունակական բարձրացումն է:[11] Նրա դիտարկմամբ, զբաղվածության բնույթի և կառուցվածքային տեղաշարժերի օբյեկտիվ վերլուծությունը կարևոր նախապայման է նպատակային և իրատեսական տնտեսական քաղաքականության մշակման համար:

Աղյուսակ 1

ՀՀ մշտական բնակչության թվաքանակի փոփոխությունները, հազ. մարդ, 2010-2024թթ.[12]

Տարե-թիվ	Ցուցա-նիշ	Բացարձակ հավելաճ		Աճի տեմպ, %		Հավելաճի տեմպ, %		1% հավելաճի տեմպ
		բազ	շղթ	բազ	շղթ	բազ	շղթ	շղթ
2010	3249.5	0.0		100.0		0.0		
2011	3018.9	-230.6	-230.6	92.9	92.9	-7.1	-7.1	32.5
2012	3021.4	-228.1	2.5	93.0	100.1	-7.0	0.1	30.2
2013	3026.9	-222.6	5.5	93.1	100.2	-6.9	0.2	30.2
2014	3017.1	-1.8	-9.8	99.9	99.7	-0.1	-0.3	30.27
2015	3010.6	-10.8	-6.5	99.6	99.8	-0.4	-0.2	30.2
2016	2998.6	-28.3	-12.0	99.1	99.6	-0.9	-0.4	30.1
2017	2986.1	-31.0	-12.5	99.0	99.6	-1.0	-0.4	30.0
2018	2972.7	-37.9	-13.4	98.7	99.6	-1.3	-0.4	29.86
2019	2965.3	-33.3	-7.4	98.9	99.8	-1.1	-0.2	29.7
2020	2959.7	-26.4	-5.6	99.1	99.8	-0.9	-0.2	29.7
2021	2962.3	-10.4	2.6	99.7	100.1	-0.3	0.1	29.6
2022	2969.2	3.9	6.9	100.1	100.2	0.1	0.2	29.62
2023	2990.9	31.2	21.7	101.1	100.7	1.1	0.7	29.7
2024	3075.8	113.5	84.9	103.8	102.8	3.8	2.8	29.9

Այս բոլոր ուսումնասիրությունները փաստում են, որ ՀՀ աշխատաշուկայի և զբաղվածության ոլորտում առկա են ինչպես համակարգային, այնպես էլ

[11] Խաչատրյան, Ա. (2024). Զբաղվածության պատկերը Հայաստանում. Ամբերդ գիտական հանդես, 2024 համար 1, էջ 29. Վերցված է https://asue.am/upload/files/amberd/2024-year-1/4.pdf.

[12] Կազմվել և խմբավորվել է հեղինակի կողմից՝ ՀՀ ՎԿ տվյալների հիման վրա՝ https://armstat.am/am/?nid=12&id=19001&submit=%D5%93%D5%B6%D5%BF%D6%80%D5%A5%D5%AC, (մուտք 27.07.2025թ.)

իրավիճակային խնդիրներ, որոնք պահանջում են համալիր վերլուծություն և երկարաժամկետ ռազմավարական մոտեցում:

Մեթոդաբանություն: ՀՀ-ում զբաղվածության կառուցվածքի դինամիկան և միտումները ուսումնասիրվել են մի շարք քանակական և որակական մեթոդներով: Որպես հիմնական մեթոդաբանական գործիք կիրառվել է էկոնոմետրիկ մոդելավորումը, մասնավորապես՝ բազմագծային ռեգրեսիոն վերլուծությունը: Մշակվել և գնահատվել է հատուկ էկոնոմետրիկ մոդել, որն ուսումնասիրում է զբաղվածության հիմնական ցուցանիշների (կախյալ փոփոխական) կախվածությունը մի շարք գործոններից:

Աղյուսակ 2

ՀՀ աշխատանքային ռեսուրսների փոփոխությունները 2010-2024թթ. [13]

Տարե-թիվ	Ցուցա-նիշ	Բացարձակ հավելաճ		Աճի տեմպ, %		Հավելաճի տեմպ, %		1% հավելաճի տեմպ
		բազ	շղթ	բազ	շղթ	բազ	շղթ	շղթ
2010	2390	0.0		100.0		0.0		
2011	2286	-104.0	-104.0	95.6	95.6	-4.4	-4.4	23.9
2012	2261	-129.0	-25.0	94.6	98.9	-5.4	-1.1	22.9
2013	2189	-201.0	-72.0	91.6	96.8	-8.4	-3.2	22.6
2014	2180	-106.0	-9.0	95.4	99.6	-4.6	-0.4	21.89
2015	2107	-154.0	-73.0	93.2	96.7	-6.8	-3.3	21.8
2016	2011	-178.0	-96.0	91.9	95.4	-8.1	-4.6	21.1
2017	2021	-159.0	10.0	92.7	100.5	-7.3	0.5	20.1
2018	2197	90.0	176.0	104.3	108.7	4.3	8.7	20.21
2019	2201	190.0	4.0	109.4	100.2	9.4	0.2	22.0
2020	2200	179.0	-1.0	108.9	100.0	8.9	0.0	22.0
2021	2227	30.0	27.0	101.4	101.2	1.4	1.2	22.0
2022	2229	28.0	2.0	101.3	100.1	1.3	0.1	22.27
2023	2223	23.0	-6.0	101.0	99.7	1.0	-0.3	22.3
2024	2304.3	77.3	81.3	103.5	103.7	3.5	3.7	22.2

Վերլուծություն: ՀՀ-ում վերջին ժամանակահատվածում տեղի ունեցած հասարակական-քաղաքական, սոցիալ-տնտեսական արմատական փոփոխությունները նշանակալի ազդեցություն են ունեցել հասարակական կյանքի բոլոր բնագավառների վրա, որի հետևանքով ստեղծվել է զարգացման յուրահատուկ օրինաչափություններ ունեցող միանգամայն նոր իրականություն: ՀՀ-ում զբաղվածության խնդիրները կապված են գործազրկության բարձր

[13] Կազմվել և խմբավորվել է հեղինակի կողմից՝ ՀՀ Ավծ տվյալների հիման վրա՝ https://www.armstat.am/am/?nid=12&id=08011&submit=%D5%93%D5%B6%D5%BF%D6%80%D5%A5%D5%AC, (մուտք 27.07.2025թ.)

մակարդակի, ոչ պաշտոնական զբաղվածության տարածվածության, երիտասարդների և կանանց աշխատանքային ինտեգրման դժվարությունների, ինչպես նաև աշխատաշուկայի պահանջների և կրթական համակարգի անհամապատասխանության հետ:

2010-2024 թթ. ընթացքում ՀՀ մշտական բնակչության թվաքանակը ցույց է տվել նվազման միտում՝ 2010 թ.-ի 3249.5 հազ. մարդուց հասնելով մինչև 2023 թ.-ի 2990.9 հազ., սակայն 2022 թվականից սկսած արձանագրվել է դրական դինամիկա, և 2024 թ.-ին բնակչության թիվը կազմել է 3075.8 հազ., ինչը կարող է պայմանավորված լինել ներգաղթի աճով, բնական աճի դրական միտումներով կամ վիճակագրական հաշվարկների վերանայմամբ՝ վերանշելով ժողովրդագրական քաղաքականության վերանայման անհրաժեշտությունը:

Աղյուսակ 3

Աշխատանքային ռեսուրսների կազմը (15-74 տարեկան մշտական բնակչություն), 1 000 մարդ, միջին տարեկան[14]

Տարեթիվ	Տղամարդ (հազ.)	Կին (հազ.)	Քաղաք (հազ.)	Գյուղ (հազ.)
2010	1,075.7	1,314.0	1,554.6	835.1
2011	1,017.0	1,269.3	1,498.3	788.0
2012	1,004.7	1,256.1	1,475.1	785.7
2013	974.9	1,214.1	1,395.5	793.5
2014	956.7	1,223.4	1,389.8	790.4
2015	940.2	1,166.5	1,313.4	793.2
2016	905.2	1,106.2	1,256.8	754.6
2017	914.5	1,106.8	1,249.7	771.6
2018	1,022.7	1,173.7	1,261.3	935.1
2019	1,024.1	1,177.1	1,357.4	843.7
2020	1,009.6	1,190.4	1,315.1	879.8
2021	1,007.4	1,219.7	1,327.3	899.8
2022	1,032.3	1,196.2	1,412.4	816.1
2023	1,039.1	1,184.1	1,431.6	791.6
2024	1,074.1	1,230.2	1,373.1	931.2

2010-2024 թթ. ընթացքում ՀՀ աշխատանքային ռեսուրսների դինամիկան ցուցաբերել է փոփոխական միտումներ. 2010-2016 թթ. գրանցվել է շարունակական նվազում, ինչը պայմանավորված էր արտագաղթով, սակայն 2017 թ.-ից սկսած դիտվում են դրական շեղումներ՝ մասնավորապես 2018 թ.-ին արձանագրվել է զգալի աճ (108.7% շղթայական աճի տեմպ), իսկ 2022-2024 թթ. արձանագրվել է կայուն բարձրացում, և 2024 թ.-ին ռեսուրսները հասել են 2304.3

[14] Կազմվել և խմբավորվել է հեղինակի կողմից՝ ՀՀ Ավծ տվյալների հիման վրա https://www.armstat.am/am/?nid=965 , (մուտք 27.07.2025թ.)

հազ. մարդու՝ վկայելով աշխատուժի աստիճանական վերականգնման և աշխատաշուկայի ակտիվացման մասին:

2010-2024 թվականների ընթացքում ՀՀ մշտական բնակչության աշխատունակ ռեսուրսների կազմն աչքի է ընկնում որոշակի փոփոխություններով: Տղամարդկանց թիվը գրեթե ամեն տարի անկման ցուցանիշ է գրանցվել մինչև 2016 թվականը, սակայն 2018 թվականից կրկին աճի միտում է նկատվում՝ 2024-ին հասնելով 1,074 հազար մարդու, ինչը մոտ է 2010-ի ցուցանիշին: Կին բնակչության մեջ փոքր տատանումներով նկատվում է նաև իջեցում 2015-2017 թվականներին, որից հետո զգալի աճ է գրանցվել՝ 2024-ին կազմելով 1,230 հազար, գերազանցելով 2010 թվականի մակարդակը: Տարածքային մասշտաբով, քաղաքային աշխատունակ ռեսուրսը ավելի կայուն է պահպանվել՝ 2010-ի 1,554.6 հազարից փոքր անկումից հետո՝ 2024-ին ընկած միջակայքում 1,373.1 հազար, մինչդեռ գյուղական բնակչության թիվը տատանվում է, հատկապես նկատելի է անկում 2012-2017 թվականներին և աճ 2018-ին, ապա նոր՝ նվազում:



Գծապատկեր 1: Տնտեսապես ակտիվ և ոչ ակտիվ բնակչություն, հազար մարդ, տնտեսական ակտիվության մակարդակ%[15]

2010-2024 թթ. ընթացքում ՀՀ-ում տնտեսական ակտիվության մակարդակը տատանվել է՝ ցուցաբերելով նվազման միտում՝ 2010 թ.-ի 61.2%-ից իջնելով մինչև 2024 թ.-ի 58.9%: Եթե 2010-2014 թթ. տնտեսական ակտիվությունը համեմատաբար կայուն էր՝ շուրջ 63% մակարդակում, ապա 2015-ից սկսած նկատվում է նկատելի անկում, իսկ 2018-2021 թթ. այն հասել է նվազագույն արժեքներին՝ շուրջ 56-58%: Վերջին տարիներին՝ 2022-ից սկսած, նկատվում է ցուցանիշի մակարդակի չնչին վերականգնում: Նվազման հիմնական պատճառները կապված են եղել աշխատաշուկայում ոչ բավարար պահանջարկի,

[15] Կազմվել և խմբավորվել է հեղինակի կողմից՝ ՀՀ Ավծ տվյալների հիման վրա armstat.am/file/doc/99552423.pdf, (մուտք 27.07.2025թ.)

միգրացիոն հոսքերի, բնակչության կառուցվածքային տեղաշարժերի և կրթության համակարգային փոփոխությունների հետ:



Գծապատկեր 2. ՀՀ զբաղվածության թվաքանակը և մակարդակը, 2008-2023 թվականներին[16]



Գծապատկեր 3. Գործազրկության միտումները Հայաստանում, 2008-2024 թվականներին[17]

2008-2024 թվականների ընթացքում Հայաստանի զբաղված բնակչության թվաքանակը ունեցել է որոշակի փոփոխություններ, մասնավորապես 2009 թվականին նկատվել է նվազում, որից հետո զբաղվածության ցուցանիշը սկսել է

[16] Կազմվել և խմբավորվել է հեղինակի կողմիցՀՀ Ավծ տվյալների հիման վրա https://armstat.am/am/?nid=12&id=08015&submit=%D5%93%D5%B6%D5%BF%D6%80%D5%A5%D5%AC, (մուտք 27.07.2025թ.)

[17] Կազմվել և խմբավորվել է հեղինակի կողմից՝ ՀՀ Ավծ տվյալների հիման վրա՝ https://armstat.am/am/?nid=12&id=08015&submit=%D5%93%D5%B6%D5%BF%D6%80%D5%A5%D5%AC

աճել: 2016 թվականը եղել է նվազագույն մակարդակ՝ կազմելով 1006.2 հազար մարդ, սակայն դրանից հետո կրկին արձանագրվել է աճ: 2023 թվականին զբաղված բնակչության թիվը հասել է 1174.4 հազարի, որը այս ժամանակահատվածի առավելագույններից մեկն է, իսկ 2024 թվականին գրանցվել է փոքր անկում՝ 1168.4 հազար: Զբաղվածության մակարդակը, որը արտահայտված է տոկոսներով, նույնպես փոփոխվել է բնականաբար՝ առավելագույնը արձանագրվել է 2013 թվականին՝ 53.2%-ի մակարդակով, ապա իջել է մինչև 47.7% 2018 թվականին: Վերջին տարիներին զբաղվածության մակարդակը կրկին աճել է՝ 2023-ին հասնելով 52.8%-ի, իսկ 2024-ին կազմելով 50.7%:

Աղյուսակ 4

Զբաղվածների թվաքանակը* (15-74 տարեկան մշտական բնակչություն), 1 000 մարդ, միջին տարեկան[18]

Տարվա թիվ	Ընդամենը (հազ.)	Տղամարդ (հազ.)	Կին (հազ.)	Քաղաք (հազ.)	Գյուղ (հազ.)
2010	1185.2	644.8	540.4	627.7	557.5
2011	1175.1	610.9	564.2	631.8	543.3
2012	1172.8	605	567.8	627.4	545.4
2013	1163.8	607.5	556.3	623	540.8
2014	1133.5	589.4	544.1	623.6	509.9
2015	1072.6	562.3	510.4	559.3	513.4
2016	1006.2	528.2	478	520.9	485.3
2017	1011.7	529.8	481.9	530.7	481
2018	1048.5	601.1	447.4	545.4	505.1
2019	1077.4	605.7	471.6	626.2	451.1
2020	1052.4	566	486.4	599.7	452.7
2021	1088.3	594.3	494	594.6	493.7
2022	1134.8	637.9	496.9	664.8	470
2023	1174.4	660.7	513.7	711.8	462.6
2024	1168.4	666	502.4	658	510.4

2008–2024 թվականների ընթացքում Հայաստանում գործազրկության մակարդակն ունեցել է փոփոխական դինամիկա՝ բնութագրվելով ընդհանուր նվազման միտումով: 2009–2010 թվականներին գործազրկությունը հասել է առավելագույնի՝ համապատասխանաբար 18.7% և 19%, որից հետո դիտվել է աստիճանական անկում՝ ընդմիջվող որոշ տարիների աճով (օրինակ՝ 2014–2015 և 2018 թթ.): 2021 թվականից սկսած գործազրկության մակարդակը շարունակաբար նվազել է՝ 2023 թվականին հասնելով նվազագույնի՝ 12.4%, ինչը կարող է վկայել տնտեսական ակտիվության աճի և զբաղվածության խթանման

[18] Կազմվել և խմբավորվել է հեղինակի կողմից՝ ՀՀ Ավծ տվյալների հիման վրա https://www.armstat.am/am/?nid=965 , (մուտք 27.07.2025թ.)

միջոցառումների արդյունավետության մասին: Սակայն 2024 թվականին գրանցված աճը՝ մինչև 13.9%, կարող է պայմանավորված լինել արտաքին կամ ներքին տնտեսական մարտահրավերներով:

ՀՀ զբաղված բնակչության թվաքանակը 2010-2024 թվականներին տարբեր էկոնոմիկա-սոցիալական պայմանների ազդեցությամբ փոփոխություններ է ապրել թե՛ քաղաքային, թե՛ գյուղական տարածքներում, ինչպես նաև տղամարդկանց ու կանանց շրջանում: Քաղաքային զբաղվածների թիվը հիմնականում գերազանցել է գյուղականների ցուցանիշը՝ առավել նկատելի աճով հատկապես վերջին տարիներին, ինչը վկայում է քաղաքաշինական և տնտեսության կենտրոնացման գործընթացների մասին: Մասնավորապես, 2023-ին քաղաքային զբաղվածների թիվը հասել է 711.8 հազարի, մինչդեռ գյուղականները՝ 462.6 հազարի: Տղամարդկանց զբաղվածության մակարդակը մնացել է բարձր՝ գերակշռելով կանանց ցուցանիշները, սակայն կանանց զբաղվածությունը նույնպես աստիճանաբար աճել է, մասնավորապես 2011-2012 թվականներից հետո:



Գծապատկեր 4: Բնակչության զբաղվածության մակարդակը ԵԱՏՄ երկրներում, %, 2010-2024թթ.[19]

ԵԱՏՄ երկրների՝ Հայաստանի, Բելառուսի, Ղազախստանի և Ռուսաստանի զբաղվածության մակարդակի համեմատական վերլուծությունը ցույց է տալիս, որ 2010-2024 թթ. ընթացքում բոլոր երկրներում ցուցանիշները պահպանվել են համեմատաբար կայուն, սակայն որոշ տարբերություններով:

Բելառուսում զբաղվածության մակարդակը մնացել է համեմատաբար բարձր և կայուն՝ հիմնականում տատանվելով 59-61.7% միջակայքում, իսկ 2024

[19] Կայք World Economic Outlook (WEO), October 2024, https://www.imf.org/en/Publications/WEO/weo-database/2024/October, (մուտք 27.07.2025թ.)

թվականին նկատվել է աճ՝ հասնելով 67.5%-ի: Ղազախստանում զբաղվածության մակարդակը սկսվել է բարձր՝ մոտ 67-69%, ապա 2020 թվականից իջեցման միտում է նկատվում, հատկապես 2024-ին, երբ ցուցանիշը հասել է 65%-ի: Ռուսաստանում զբաղվածության մակարդակը մնացել է համեմատաբար կայուն՝ 58-61.6% սահմաններում, վերջին տարիներին ցուցադրելով փոքր աճ: Այս տվյալները ցույց են տալիս, որ ԵԱՏՄ երկրներում զբաղվածության մակարդակի փոփոխությունները պայմանավորված են ինչպես տեղական տնտեսական գործոններով, այնպես էլ տարածաշրջանային սոցիալ-տնտեսական գործընթացներով:

ՀՀ տնտեսապես ակտիվ բնակչության(Xi) և զբաղվածության ցուցանիշների միջև կապը հասկանալու համար կատարենք ռեգրեսիոն վերլուծություն:

Աղյուսակ 6

ՀՀ տնտեսապես ակտիվ բնակչության և զբաղվածության ցուցանիշների ռեգրեսիոն կապի բացահայտում

Regression Statistics								
Multiple R	0.8929							
R Square	0.7973							
Adjusted R Square	0.7817							
Standard Error	29.524							
Observations	15							
ANOVA								
	df	SS	MS	F	Significance F			
Regression	1	44579.4	44579.4	51.14	7.46E-06			
Residual	13	11331.7	871.67					
Total	14	55911.1						
	Coefficients	Standard Error	t Stat	P-value	Lower 95%	Upper 95%	Lower 95.0%	Upper 95.0%
Intercept	42.14181	149.65	0.28159	0.783	-281.172	365.46	-281.2	365.5
Xi	0.799462	0.1117	7.1514	7.46	0.557952	1.040972	0.5579	1.041

Կատարված ռեգրեսիոն վերլուծության արդյունքները ցույց են տալիս զբաղվածության մակարդակի և տնտեսապես ակտիվ բնակչության միջև վիճակագրորեն ամուր կապի առկայությունը: Ստացված մոդելը բացատրում է ուսումնասիրվող ցուցանիշի տատանումների մոտ 80%-ը ($R^2 = 0.797$), ինչը վկայում է դրա բարձր բացատրական ուժի մասին: Մոդելի վիճակագրական նշանակությունը հաստատվում է Significance F ցուցանիշի չափազանց ցածր արժեքով (7.46×10^{-6}), ինչը մերժում է այն վարկածը, թե հայտնաբերված կապը պատահական է: Անկախ փոփոխականի՝ «Տնտեսապես ակտիվ բնակչություն»-ի ազդեցության նշանակալիությունն ապացուցվում է զրոյին մոտ p-value-ով

(≈0.000007) և t-վիճակագրության բարձր արժեքով (7.15)։ Գնահատված 0.80 ռեգրեսիայի գործակիցը մատնանշում է ուղիղ համեմատական կապ. տնտեսապես ակտիվ բնակչության թվի աճին զուգընթաց նկատելիորեն բարձրանում է նաև զբաղվածության մակարդակը։ Մասնավորապես, գնահատումները ցույց են տալիս, որ տնտեսապես ակտիվ բնակչության յուրաքանչյուր հավելյալ 1000 մարդու դեպքում, զբաղվածության մակարդակը, միջինում, աճում է մոտ 0.8 միավորով։ Այս առումով տնտեսապես ակտիվ բնակչությունը հանդիսանում է զբաղվածության դինամիկայի որոշիչ գործոններից մեկը։

Եզրակացություններ: Իրականացրած վերլուծության արդյունքում կարող ենք եզրակացնել, որ թեև վերջին տարիներին Հայաստանում նկատվում են տնտեսական ակտիվության աճ և գործազրկության ցուցանիշների բարելավում, զբաղվածության մակարդակը շարունակում է մնալ ցածր՝ հատկապես ԵԱՏՄ երկրների համատեքստում։ Սա վկայում է աշխատաշուկայի կառուցվածքային և համակարգային խնդիրների առկայության մասին, արտագաղթի, ինչպես նաև աշխատաշուկան կարգավորող ինստիտուտների թույլ կարողությունները արդյունավետորեն հաղթահարելու այդ անհամապատասխանությունը։ Հայկական աշխատաշուկայի առջև ծառացած մարտահրավերները պահանջում են զբաղվածության պետական կարգավորման ռազմավարության վերանայում՝ ուղղված ոչ միայն քանակական ցուցանիշների, այլև աշխատանքի որակի բարելավմանը։ Ռեգրեսիոն վերլուծության արդյունքում կարող ենք ասել, որ տնտեսապես ակտիվ բնակչությունը էականորեն և դրական ուղղությամբ ազդում է զբաղվածության ցուցանիշի վրա՝ ապահովելով մոդելի բարձր բացատրողականություն ($R^2 \approx 0.80$) և վիճակագրական նշանակալիություն։

Առաջարկություններ: ՀՀ-ում զբաղվածության մակարդակի բարձրացման և աշխատաշուկայի արդյունավետության ապահովման համար անհրաժեշտ է վերանայել զբաղվածության պետական քաղաքականությունը՝ որպես հիմնաքար դարձնել կրթության և աշխատաշուկայի կապի խորացումը, վերապատրաստման և վերարակավորման ծրագրերի ընդլայնումը, ինչպես նաև մասնավոր հատվածի զարգացման խթանումը։ Հաշվի առնելով ժամանակակից մարտահրավերները անհրաժեշտ է աշխատաշուկայի թվայնացում՝ տվյալների հիման վրա քաղաքականություն մշակելու և ռեսուրսների թիրախավորված բաշխում ապահովելու համար, ինչը կապահովի զբաղվածության ոլորտի կայուն զարգացում և արդյունավետ կառավարում։

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Խոջաբեկյան, Վ. (2001). Զբաղվածության հիմնախնդիրները Հայաստանում անցումային շրջանի ընթացքում. Երևան: Գիտություն, 312 էջ։
2. Սարգսյան, Ա. (2001). Աշխատաշուկան Հայաստանի Հանրապետությունում. Երևան: Գիտություն, 284 էջ։

3. Թադևոսյան, Ա. (2001). Զբաղվածության հիմնախնդիրներն ու աղքատության հաղթահարման ռազմավարությունները Հայաստանում. Երևան: Հայկական ռազմավարական և ազգային հետազոտությունների կենտրոն, 256 էջ:
4. Թադևոսյան, Զ., Ավետիսյան, Թ., Մկրտչյան, Տ., Մաթևոսյան, Դ., և Դավթյան, Կ. (2021). ՀՀ աշխատաշուկայի վերլուծության և զբաղվածության պետական կարգավորման ծրագրային լուծումներ. Երևան: Ամբերդ, 312 էջ:
5. Թադևոսյան, Զ., Ավետիսյան, Թ., Մկրտչյան, Տ., Մաթևոսյան, Դ., և Դավթյան, Կ. (2022). Բնակչության զբաղվածության ապահովման հիմնախնդիրներն ու պետական կարգավորումը Հայաստանի Հանրապետությունում. Երևան: Ամբերդ. https://asue.am/upload/files/amberd/Amb%2052.pdf, 328 էջ:
6. Խաչատրյան, Ա. (2024). Զբաղվածության պատկերը Հայաստանում. Ամբերդ գիտական հանդես, 2024(1), 29-45 էջ: https://asue.am/upload/files/amberd/2024-year-1/4.pdf
7. Հակոբյան, Լ. Լ. (2013). Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության մեջ աշխատաշուկայի ձևավորում և աշխատանքային ռեսուրսների օգտագործման արդյունավետության բարձրացում. Երևան: 320 էջ:
8. Մանգասարյան, Ռ. (2013). Զբաղվածության կարգավորման հիմնախնդիր-ները ԼՂՀ-ում. https://arar.sci.am/Content/257723/file_0.pdf, 28 էջ:
9. Байдова, Н. В., Гришина, О. Ю., & Кочинян, Г. Э. (2019). России и Армении: Правовое регулирование трудовой деятельности осуждённых в исправительных учреждениях. ЭКОНОМИКА № 3 (7) / 2019 , стр. 89
10. Катульский, Е. Д., Щипанова, Д. Г., Гурина, Е. А., & Арбаев, Г. Э. (2023). Современные тенденции развития российского рынка труда. Знание. Понимание. Умение, (1)ст. 198. https://doi.org/10.17805/zpu.2023.1.14
11. Нанавян, А. М. (2012). Структура занятости населения: динамика и тенденции развития. Национальные интересы: приоритеты и безопасность, (7), стр. 42.
12. International Monetary Fund. (2024). World Economic Outlook (WEO), October 2024. https://www.imf.org/en/Publications/WEO/weo-database/2024/October
13. ՀՀ ՎԿ, https://armstat.am/am/?nid=12&id=19001&submit=%D5%93%D5%B6%D5%BF%D6%80%D5%A5%D5%AC
14. ՀՀ ՎԿ, https://www.armstat.am/am/?nid=12&id=08011&submit=%D5%93%D5%B6%D5%BF%D6%80%D5%A5%D5%AC
15. ՀՀ ՎԿ, https://www.armstat.am/am/?nid=965
16. ՀՀ ՎԿ, https://armstat.am/file/doc/99552423.pdf , https://armstat.am/am/?nid=12&id=08015&submit=%D5%93%D5%B6%D5%BF%D6%80%D5%A5%D5%AC

ԶԲԱՂՎԱԾՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԻՏՈՒՄՆԵՐԸ ԵՎ ԴԻՆԱՄԻԿԱՅԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ ՀՀ-ՈՒՄ

ՆԵՐՍԵՍ ՆԵՐՍԻՍՅԱՆ

Համառոտագիր

Մի կողմից նոր ուժգնությամբ ի հայտ եկող մարտահրավերները, մյուս կողմից նորաստեղծական զարգացման հնարավորությունները՝ զբաղվածության ոլորտում, աշխարհի տարբեր երկրներում պահանջում են համահունչ մոդելներ՝ ոլորտի կայուն զարգացման և հետագա աճի ապահովման նպատակով: Զբաղվածությունը յուրաքանչյուր երկրի սոցիալ-տնտեսական զարգացման հիմնարար ցուցանիշներից է, որը պայմանավորում է բնակչության կենսամակարդակը, տնտեսական ակտիվությունը և սոցիալական կայունությունը: ՀՀ-ում զբաղվածության խնդիրը ռազմավարական նշանակություն ունեցող կառավարման հիմնահարց է հանդիսանում, որը առավել, քան կարևորում է ոլորտի ուսումնասիրությունները: ՀՀ-ում վերջին տարիներին արձանագրվել են սոցիալ-տնտեսական տարբեր զարգացումներ, ներառյալ աշխատաշուկայի կառուցվածքային փոփոխություններ, միգրացիոն գործընթացների ակտիվացում, ինչպես նաև համավարակի և հետպատերազմյան իրադարձությունների ազդեցությունը աշխատուժի վրա:

ՀՀ տնտեսության վրա ազդող ներքին և արտաքին գործոնները, ինչպես նաև բնակչության սոցիալ-տնտեսական իրավիճակը, պահանջում են զբաղվածության զարգացման միտումների ու դրանց դինամիկայի համակողմանի վերլուծություն: Այս համատեքստում նպատակահարմար է վերլուծել զբաղվածության զարգացման միտումները, դինամիկան և դրանց վրա ազդող գործոնները ՀՀ-ում՝ գնահատելու աշխատաշուկայի ներկա վիճակը, բացահայտելու խնդիրները և ներկայացնելու հնարավոր քաղաքականություններ ու մեխանիզմներ՝ զբաղվածության խթանման նպատակով:

Հոդվածի հիմնական նպատակը վերլուծել ՀՀ-ում զբաղվածության զարգացման հիմնական միտումները, դինամիկան և գործոնները, ինչպես նաև բացահայտել զբաղվածության ոլորտում առկա հիմնախնդիրներն ու զարգացման հնարավորությունները: Ուսումնասիրելով ՀՀ զբաղվածության ոլորտում դինամիկ փոփոխությունները, ազդող գործոնները, և, իհարկե, զարգացման խոչընդոտները, համեմատականներ տանելով ՀՀ հարևան պետությունների համապատասխան ցուցանիշների հետ ներկայացվել է զբաղվածության ոլորտում զարգացմանը խթանող հնարավոր գործոնները և տարբերակները: Հոդվածում կիրառվել են վերլուծական, համեմատական, վիճակագրական, տնտեսական մաթեմատիկական և գրաֆիկական մեթոդներ: Տեղեկատվական հիմք են կազմել ՀՀ վիճակագրական կոմիտեի հրապարակումները, Ազգային վերլուծական կենտրոնների զեկույցները,

գործազրկության և զբաղվածության վերաբերյալ միջազգային կազմակերպությունների (ՄԱԿ, ԱՄՀ, Աշխատանքի միջազգային կազմակերպություն) տվյալները, ինչպես նաև մասնագիտական գրականությունը, գիտական հոդվածներն ու իրավական ակտերը:

Բանալի բառեր: Զբաղվածություն, կենդանակարդակ, գործազրկություն, աշխատաշուկա, տնտեսական ակտիվություն, աշխատուժ:

АНАЛИЗ ТЕНДЕНЦИЙ И ДИНАМИКИ РАЗВИТИЯ ЗАНЯТОСТИ В РЕСПУБЛИКЕ АРМЕНИЯ

НЕРСЕС НЕРСИСЯН

Аннотация

С одной стороны, возникающие с новой силой вызовы, с другой стороны, возможности для нового развития сферы занятости в различных странах мира требуют разработки согласованных моделей для обеспечения устойчивого развития и дальнейшего роста сектора. Занятость является одним из фундаментальных показателей социально-экономического развития каждой страны, определяющим уровень жизни населения, экономическую активность и социальную стабильность. В Республике Армения вопрос занятости является стратегически важным управленческим вопросом, что более чем подчеркивает важность исследований в этом секторе. В последние годы в Республике Армения зафиксированы различные социально-экономические изменения, включая структурные изменения на рынке труда, активизацию миграционных процессов, а также влияние пандемии и послевоенных событий на рынок труда.

Внутренние и внешние факторы, влияющие на экономику Республики Армения, а также социально-экономическое положение населения, требуют всестороннего анализа тенденций развития занятости и их динамики. В этом контексте целесообразно проанализировать тенденции развития занятости, динамику и факторы, влияющие на них в Республике Армения, чтобы оценить текущее состояние рынка труда, выявить проблемы и представить возможные стратегии и механизмы содействия занятости.

Основной целью статьи является анализ основных тенденций, динамики и факторов развития занятости в Республике Армения, а также выявление основных проблем и возможностей развития в сфере занятости. Путем изучения динамики изменений в сфере занятости Республики Армения, факторов, влияющих на развитие, и, конечно же, препятствий, а также путем сравнения с соответствующими показателями соседних с Республикой Армения стран, были представлены возможные факторы и варианты содействия развитию в сфере

занятости. В статье использованы аналитические, сравнительные, статистические, экономико-математические и графические методы. Информационная база была сформирована на основе публикаций Статистического комитета Республики Армения, отчетов национальных аналитических центров, данных о безработице и занятости от международных организаций (ООН, МВФ, Международная организация труда), а также профессиональной литературы, научных статей и правовых актов.

Ключевые слова: занятость, уровень жизни, безработица, рынок труда, экономическая активность, рабочая сила.

ANALYSIS OF EMPLOYMENT DEVELOPMENT TRENDS AND DYNAMICS IN THE REPUBLIC OF ARMENIA

NERSES NERSISYAN

Abstract

On the one hand, the emergence of increasingly complex challenges, and on the other, new opportunities for innovative development in the sphere of employment, require the adoption of coherent policy models to ensure the sector's sustainable development and long-term growth. Employment is one of the core indicators of socio-economic development, as it directly affects living standards, economic activity, and social stability. In the Republic of Armenia, employment constitutes a strategically important area of public governance, which underscores the relevance of comprehensive analytical research.

In recent years, Armenia has experienced significant socio-economic transformations, including structural changes in the labor market, intensified migration processes, and the impact of the COVID-19 pandemic and post-war developments on the labor force. These factors, combined with internal and external economic influences, have altered both the supply and demand sides of the labor market and increased uncertainty in employment dynamics.

Given these conditions, a systematic analysis of employment trends and their determinants is essential. Such an analysis makes it possible to assess the current state of the labor market, identify key challenges, such as unemployment, skills mismatches, and labor mobility, and outline policy measures aimed at enhancing employment and labor market resilience.

The main objective of this article is to analyze the key trends, dynamics, and factors shaping employment development in the Republic of Armenia, as well as to

identify existing structural problems and potential areas for growth. The study examines changes in employment indicators, the influence of socio-economic and demographic factors, and institutional constraints, while also drawing comparative insights from neighboring countries. The research employs analytical, comparative, statistical, economic-mathematical, and graphical methods. The empirical base includes data from the Statistical Committee of the Republic of Armenia, reports of national analytical centers, international organizations (UN, IMF, ILO), as well as relevant academic literature and legal documents.

Keywords: employment, living standard, unemployment, labor market, economic activity, workforce.